# ԼՐՈՅ ԳԻՐ
## ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԵՐԱ 13

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ՅՈՒՆՎԱՐԻ 27: ՈՐ Է ١٢٤٧ ՌԱՄԱԶԱՆԻ Ն

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ:


### ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Մեծի Տէրութեան հաւատարիմ Բդէշխ Չիրմէն գաւառի այժմեան հրամանատար Հիւսէին փաշայն, ասկէց յառաջ Իւսկիւպ քաղաքը հրաման եղաւ երթալ. և երբ Ետիրնէէն Գելիպէ հասաւ. տեսաւ որ այն երկիրը աղբիւր և շատրվան բնաւ չըկայ. և բնակիչները և աղքատները՝ ջուրի կողմանէ նեղուծ կը քաշէն. և Մերիճ գետէն ուրիշ ջուր չը կայ, և անոր ալ 50, 60 հօխայ ջուրը՝ 40, 50 փարայ կը ծախուէր:

Ուստի մեծարու Բդէշխն միտքը դըրաւ, որ Վեհափառ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ մէկ ընծայմը ըլլայ, և այնպէս երկրին բընակիչները և աղքատ հպատակները ջուրի նեղութէն ազատելով՝ Գթառատ ԱՐՔԱՅԻՆ աղօթք ընեն, այն քաղաքէն եր կու ժամ հեռու եղած Տէկիրմէն տէրէսի ըսված գիւղէն, հարիւր մասրայի չափ ջուր բերաւ, և քըչքին թաղերուն մէջը և այլ յարմար տեղերը 40 էն աւելի աղբիւրներ շինել, և շատրվանմը կազմել սկսեր է. բայց ձմեռը վրայ հասնելով, գարնան ժամանակին մնայ կատարումը:

Եւ Տիեզերակալ ԱՐՔԱՅԻՆ անուանը Վերնագիրներ շատրվանին և աղբիւրներուն վրայ գրելու համար խնդրեց. և խնդրվածքը ընդունվեցաւ. և քանիմը բանաստեղծներու յանձնեցաւ որ գրեն:

Խոպըրլի Մուհասսըլ խափուճի պաշի Խալիլ աղային մեռնելու լուրը անցեալ օրերը եկաւ. և որովհետև ամէն մէկ տեղ գըտնըվօղ Մուհասսըլ, և Վօյվօտայ և Միւսէլլիմ և ամէն կերպ զաբիթներու համար՝ հրովարտակ էր տըվէր ԻՆՔՆԱԿԱԼՆ որ բնաւ մէկիմը զըկողուծ չընեն և հպատակները շահեն, աղանկ լաւ և փորձըված մարդ ըլլալով՝ մեծի դրանն Խափուճի պաշիներէն Ընեօլուի նախկին Վօյվօտայ Մուհամմէտ աղայն՝ Ըբքայական հրովարտակով Մուհասսըլ կարգըվեցաւ:

Բայց մեռնողն՝ գանձարաններուն և իր սառաֆին շատ պարտք ունենալով և զաւակ չունենալով, ապրանքը գրելու համար՝ Օէճրիէի նախկին Մուհասսըլ Խալիտ էֆէնտիին հրաման եղեր է. և Մուհասսըլութեան տիրելու ժամանակը 48 թվին մուհարրէմն ամսան ըլլալով՝ մընացած միջոց ժամանակը էմանէթի պէս պիտի կառավարէ:

Նոյնչեալ Մուհամմէտ աղայն ասկէց մինչև հոն հասնելու ատենը, անոր փոխանորդուծ պաշտօնը՝ Խոպըրլը գըտնըվօղ

է

մեծի Տէրութեան ըմձեռնըներէն Էսատ Մէհտի պէկ էֆէնտիին յանձնըւեցաւ ։

Նաև Էնկիւրիու Միւսէլլիմ Խուրշիտ փաշայի քէհեայ Խափուճի պաշի Սալիհ աղայն մեռած ըլլալով, անոր տեղը Պերղամայու նահանգին Այջըվօսայ Մուստաֆա աղան ընտրըւեցաւ. և Արքունիքէն հրամանով 47 Թվականի մարտի ամսէն այն Միւսէլլիմութե տիրողութիը իրեն տըրվեցաւ. և մինչև իր տիրելու ժամանակը մեռնողին գործքերը տեսնելու համար՝ մեռնողին գրագիր Էմին էֆէնտին Թային եղաւ ։

Այս շապան ամսոյ 23 ին հինգ շաբթի օրը ժամը տասնուկէսին Ունխափանին քովերը Կեօմրիւկ քեաթիպի Հասան էֆէնտիին տունէն կրակ պատահեցաւ, և շուտմը մարեցաւ ։

Եւ նոյն ամսոյն 24 ին ուրբաթ գիշերը ժամը 7 ին Սուլթան Մուհամմէտի ջամին հիւսիսային կողմը եղէլ էկէճի Մուհամմէտին խանութէն կրակ պատահեցաւ, 5, 6 խանութ այրեց, և իսկոյն մարեցաւ ։

## ԳՈՐԾՔ ԶՕՐԱՑ

Արքունական հրամանով Թագաւորեալ քաղաքը եղող Թիմարլու Սպահիներուն ընտրութի եղաւ. և ինչպէս կարգ և սահման դրըված է, ծեր և տկար եղողները որոշվեցան՝ որ Արքայական խնամքին տակը հանգչին ։ Իսկ զօրեղները ընտրըւեցան, Թիմարլու ձիաւորներուն գնդերէն զատված՝ նոր մէկ Թափօրմը կազմեցաւ ։

Եւ սեպհական ձիաւոր զօրքերուն երկրորդ գնդին Սաղդօլ աղասի Մուստաֆայ աղայն, զօրավարժ և կառավարիչ՝ և պատերազմական արհեստին հմուտ ըլլալով, դերապայծառ Սէրասքէր փաշայի կողմանէ հրաման խնդրըվելուն համար՝ ըստ հրամանի ԱՐՔԱՅԻՆ՝ նոյն Թափօրին վրայ Միրալայ կարգեցաւ ։

Սիլիստրեի վալի և Ռուսճուխի մուհաֆըզ Մուհամմէտ փաշայն, որ Ռումէլիին զօրքով անատօլուի կողմն երթալու վրայ էր, իր հետի եղած չորս գունդ ասքերի Մանսուրէին՝ չորս գունդ ևս վերադիր ընելով՝ մէկ Թափօր ըլլալ հրաման եղեր էր. և անոնց վրայ մէկ Հազարապետմը կարգել հարկաւորեցաւ. հետը եղած չորս գընդերուն ընտիր գունդերը՝ որոց Հարիւրապետ էր Մուհամմէտ աղայն, ասոնք սահմանեալ կարգադրութե կերպովը պատերազմական փորձոյ հանդէս ըրին. և Մուհամմէտ աղային արժանաւորութիը յայտնի երևելուն համար՝ մեծարու Սէրասքէր փաշայն Արքունական հրամանով Հազարապետ կարգեց նոյն Թափօրին ։

Թիմարլու ձիաւոր ասքերի Մանսուրէի գնդերէն Իզմէթ պէկին Զօրապետ եղած երկրորդ գունդը՝ ասկեց յառաջ Սօֆեայ քաղաքէն այս Թագաւորեալ քաղաքը բերվելուն՝ անցեալ Լրոյ գրին մէջը գրեալ էր ։

Այս անգամ նոյն գունդը Արքունական հրամանաւ Պօնեայ երթալու վրայ է. և ողորմութեն Այ այս օրերըս ձանբայ պիտի ելլայ ։

Պաղտատու քաղաքը եկեալ Թիմարլու ձիաւոր ասքերի Մանսուրէին գունդերը իրենց պաշտօնը և հրամանը տեղը տանելով, եօթներորդ և ութերորդ գունդերը յաղթութե և յաջողութե և հրամանով ետ դարձեր են ։

Եւ անոնց ամէն զօրավարներուն և զօրքերուն պատւիրելով, որ շապանի սկիզբէն մինչև երեք ամիս Հալէպ քաղաքը երթան և ժողովվին, իրենց երկիրները խըրկըվեցան. այս պայմանովը որ իրենց գունդերուն պէտք եղած բաները կարգադրելով հոգան, և նշանակեալ ժամանակին հոն գըտնըվին ։

Ասոնց զօրապետներուն ալ Թագաւորեալ քաղաքը գալու համար՝ գերապայծառ Սպարապետն գրած էր. Զօրապետ Ռաշիտ պէկը՝ քանիմը զօրավարներով Թագաւորեալ քաղաքը եկաւ. և մօտ օրերըս Մուհամմէտ ալի պէկին ալ պետի գայ, ինչպէս իրեն իմացուած տըրված է ։

# Գնահատութիւն · Նարղ։

| | մէկ հօխա փրյ |
|---|---|
| Շէքէրլի բէչէլ | ١٨٠ |
| Շէրպէթ և զանազան շէքէր | ٢٠٠ |
| Քէլլէ շէքէրի | ٢٠٠ |
| Եարմա ըռված Թօզ շէքէրի | ١٨٠ |
| Դօրպայ և սանտըգ Թօզ շէքէրի | ١٤٠ |
| Համարակ խամ շէքէր | ٠٩٠ |
| Հաւկիթ՝ հարիւր հատը | ٥٢٠ |
| Աղէկ մերմէր Թօզի նիշասթայ | ٠٨٥ |
| Միջակ նիշասթայ | ٠٨٠ |
| Կիւլլաճ՝ Գործօղը ծախօղին | ٢٢٠ |
| Ծախօղը հասարակուն | ٢٤٠ |
| Աղէկ շէհրիէ՝ Վաճառականը էսնաֆին | ٠٦٤ |
| Էսնաֆըն հասարակութե | ٠٦٨ |
| Զէյթին՝ Վաճառականը էսնաֆին | ٠٤٤ |
| Էսնաֆըն հասարակուն | ٠٤٨ |

Այս նշանակեալ կերպովը՝ ծախօղ արհեստաւորներուն պատուէր տրված է շապան ամսոյն ١٩ին։

Սախըզի բոյաներուն համար եղած Արքայական բարեբարութեը, այս նոյնը գոհլված խօճայապաշիներուն ձեռք՚ սախըզ գրած շնորհակալութէ ուղըրին թարգմանութիւնն է։

Ածային նախադիտութեը, առկեց յառաջ պատահեալ խռովութեը ժամանակը՝ եթէ փախէն իր հայրենիքը ձգելով օտար երկիր պանդխտութ բնակօղ, և եթէ իր հայրենի երկիրը հպատակութ մնացօղ մեր քաղաքացիներուն խղճութեը ողորմելով, ժամանակին պարագաներուն բերմունքէն՝ Արքունական կողմանէ տիրած ապրանքները ետ դարձունելու, և իրենց լիակատար ներողութ շնորհելու, անցածը անցաւ՝ տուածին կատարմանը, Բարեփառ ԻՆՔՆԱԿԱԼԷՆ հրաման եղաւ։

Մենք ալ այս պարգևացը շնորհակալ ըլլալով, յունվարի 3 ին Գալաթայի եկեղեցոյն մէջը՝ Վէհափառ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ մշտնջենաւոր կենդանութեը և մեծազօր կարողութեը աղօթքը՝ գլուխներնիս բանալով՝ Այ մատուցինք։

Նոյն օրը Գալաթայ մէկ ժողովմը և խրախճան պատրաստեցաւ. Պատրիարգն մեր՝ և ազգին գլխաւորներէն Խոդիֆանաքին՝ և գըմնըլած Յունաց պօյարները և այլ կարգաւորները, և բոլոր վաճառականները, և մեր ազգէն եղած ուրիշ տէրութեց հպատակ՝ մէկ քանի ազատ վաճառականները հրավիրեցան։

Երբ այն խրախճանին մէջը ամէնքս ուրախութ կնէինք, առաջ Պատրիարգը ոտքի վրայ ելաւ՝ և ուրիշ նըստողներն ալ կանգնեցան, և բարձր ձայնով աղօթք ըրաւ, և ըսաւ. ‖ Բայց և հպատակներէն եղած բոլոր Հոռոմ ազգին, և մանաւանդ այս անգամ Սախըզի բոյաներուն՝ յաւիտենական յիշատակաց արժանի Արքայական ողորմութիւնը և արդարութիւնը բաշխօղ, հզօր արդար և ողորմած և քաղցրագութ ԻՆՔՆԱԿԱԼ՝ Բարերար ԹԱԳԱՒՈՐԻՆ մերոյ՝ մէկ օրն հազար ըլլայ, և Ալէօսմանեան գերդաստանը տոհմը՝ խկըղեանէ անոր տրված յաջողութեը հաստատուն և ուրախ մնայ ‖։ Նու բոլոր հոն եղօղները միաբերան ամէն կանչեցին։

Երկրորդ՝ քաւօրդմը (չէյրէկմը) անցնելէն յետոյ՝ Խոդիֆանաքին Պատրիարգին և ուրիշներուն հետ մէկ տեղ կրկին ոտքի վրայ ելաւ. և Ամենողորմած Աշխարհահռչակ Բարեփառ մեր ԻՆՔՆԱԿԱԼԻՆ բարձր հրամանը հնազանդութ կատարօղ՝ մեծապատիւ Գայմագամ փաշային և Սէրասքէր փաշային և Ալբէաթիպի Աֆէնտիին և Գափուտան փաշային՝ և Աշխարհակալ Թագաւորութեն ուրիշ գահերէց գործակալներուն կենացը և բարեյաջողութեը համար աղօթք ըրաւ։

Երրորդ՝ քաւօրդմը ևս անցնելէն յետոյ՝ ազգաւ Հոռոմ, և Թագաւորեալ քաղաքը եղօղ Յունաց վաճառականներէն Զախարաքին՝ ուրիշներուն հետ մէկտեղ ոտք ելաւ, և ըսաւ. ‖ Իմ հաւատակից Սախըզի բոյաները արդարութե և իրաւամբ ապահով և բարեկենցաղ ընօղ, և իմ պաշտպան յարգապատիւ Իմփերաթօրիս մեծ բարեկամ՝ Վէհափառ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ Սուլթան Մահմուտ Խան ԱՐՔԱՅԻՆ ողջութեը և բարեկենդանութեը համար աղօթք ընենք ըսաւ ‖։

Չորրորդ՝ ազգաւ Հռոմ՝ և Ֆիլէմէնկի տէրութեան հպատակ Ղուքէնոս վաճառականը, որ հաւատակից Սալոնքի բնակներուն համար եղած Ռուսիական ողորմութեանը շնորհակալ ըլլալով, ՄԵԾԱԶՕՐ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ երկարութեան կենացը և բարեբաղդութեանը համար աղօթք ըրաւ։

Հինգերորդ՝ Խոջիմփանաքին ոտքի վրայ ելաւ, և ըսաւ. «Ահաւոր արդար հզօր, և բարեգթութեան և խնամակալութեան՝ աշխարհաշինութեան և ուղղութեան կողմանէ մեր ժամանակը անոր նմանը չըգտնուող՝ մեր ԹԱԳԱՒՈՐԻՆ և Ռուսերուն դրացիներուն և հաւատարիմ բարեկամներուն հպատակները՝ որ մեր ուրախութեան խրախճանը կարգեցին, նոյն Թագաւորներուն կենդանութեանը համար օրհնութիւն տըվաւ»։

Եւ ահա մենք ուրախութիւն ըրինք, դուք ալ երբեմն երբեմն սովորութիւն ըրած աղօթքը և օրհնութիւնը կրկնեցէք. և մեր ըրածին պէս՝ յատուկ օրհնութիւն և գոհութիւն ընելու համար այս գիրը ձեզի գրեցինք։

## ԳՈՐԾՈՑ ԱՐՏԱՔԻՆ

Ինկլիզերոյն Արքային տարին երէք չորս անգամ էր հրամանովը [illegible] Փառլամենթօ ըսված ժողովը, յայս տարի 1831, դեկտեմբերի 7 ին, որ է 47 Թիվին՝ դեկտեմբերի 15 ին, աշխէն գլխաւորներէն և երեսփոխաններէն գումարւած ժողովին ըրած առենախօսութեան թարգմանութիւնն է։

—

Մեծ գլխաւորք տէրութեան և երեսփոխանք ազգին, ներկայ ժամանակին պարագաները նայելով՝ այն հարկաւոր գործքերը որ յատուկ ձեր անձին ջանացողութեանը կը կատարի, առանց ուշացընելու տեսնաք և կարգի դնէք. ահա այս բանին համար ձեզի այս ժողովը հրաւիրեցի։

Անկէց յառաջ գումարեալ միւս ժողովին մէջը՝ շատ գործքեր մէկ զմէկու վրայ գալուն պատճառաւ, նեղութիւն և տառապանք կրեցիք. և շունչ առնելու և հանգչելու համար՝ ձեզի միջոց ժամանակի արձակեցաւ. և քիչմը ժամանակ անցնելով կրկին անգամ հարկաւորեցաւ որ պատահեալ գործքերուն կարգադրութեանը պարապիք. և անոնց համար քաշելու նեղութիւններնիդ, ինծի ալ նեղութեան պատճառ է։

Խորհրդականցութեան ժողովս հարկաւոր անդամներէն սեպված ազգին երեսփոխաններն՝ իրենց պարագաները նոր կարգիմը մէջ դնելու համար՝ ձեզի հարկադրեալ պատճառներուն և պատրաստութիւններուն նայելու և քննելու կերպով՝ յառաջ ձեզի յանձնել և պատուիրել՝ իմ վրաս թագաւորական պարտք եղած գիտեմ։ Այս տարակուսութեան կապին շուտ և յայտնի բացվիլը և արձակվիլը՝ տէրութեանս ապահովութեան և հաճութեան, և հպատակներուս համբերութեան հարկաւոր պիտի ըլլայ։

Տէրութեանս մէկ քանի նահանգներուն նեղութիւն տըվող վնասակար բաները վերջին աստիճանը ըլլալուն համար՝ տրտմութեան պատճառ կըլլայ ինծի։ Սակայն այս վնասակար բաներուն գեղեցիկ հնարք և դեղը, շնորհօքն այ՝ ներքին և արտաքին խաղաղութեան պատճառները հաստատելով և պահպանելով կըլլայ։

Վաճառականութեան գործոյ քանիմը արգելք պատահելովը, և արհեստաւորաց գործարաններուն գործքերը դադարելովը, գործարանները խափանեցան. և ասոր պատճառները վերցընելու կերպը գտնալ և յառաջ տանիլ՝ միշտ իմ ջանացողութեանս կարօտ ըլլալով, յայտնի եղած բոլոր պատճառները՝ և մէջէ անցած պատրաստութիւնները ընդունելու հաճութիւն ունենալնիդ գիտեմ։

Եւրոպայի պատահմունքներուն պատճառովը քանիմը տեղ պատահած ախտին նման մէկ հիվանդութիւնմը Սօնտէրլանտ քաղաքը պատահելով, սրտիս ցաւ տըվաւ։ Այս ախտը երկրիս մէջէն մի ելաւ, եթէ օտար երկրէ մի մտաւ, ճշմարիտը մինչև հիմա յայտնի եղած չէ. սակայն շուտով թափանցելուն և տարածվելուն, և սաստիկ վնասակար և չար ըլլալուն պատճառովը, Եւրոպայի մէջ պատահեալ հիւանդութեան նման չըլլալը յայտնի է։

Այսու ամէն, այս ախտը ուրիշին չը թափանցելուն և չըշատնալուն համար, հարկաւոր եղած բոլոր նախապատրաստ պատճառները 'ի գործ դնել հարկաւոր է. անոր համար այս ախտին տեւելը մտադրութ նայօղ և խորհօղ քանիմը մարդկանց պատվիրած խրատները և պատրաստութիւնները ինծի ընդունելի եղեր է։

Անկլիզի տէրութեան հպատակ եղօղ, բայց կրօնքի կողմանէ քանիմը բաներու վրայ այն տէրութե անմիաբան գտնըւօղ Իռլանտայի երկրին քանիմը տեղւանքը տասանորդ վճարելու համար պատահեալ հակառակութե վրայ հաստատ մնալընին դէպի վերջանալով, նոյն երկրին մէջը հաստատւած կրօնքին հարկաւոր եղածները պահել արժան տեսնըւեցաւ. և բոլոր գանգատանքներուն պատճառները վերնալու կերպով, նոյն տասանորդը վերնալու համար եղած սահմանադրութիւնները և կանոնները՝ գեղեցիկ ձեւիմը բերելու հնարը որոնելը, իմ առաջին դիտաւորութիւն է։

Ասոր եթէ հակառակութի եղած նիւթը, և եթէ նոյն երկրին վերաբերել ամէն իրողութիւնը, որ անոնց վրայ քննութի և վէճ կըլլար, կարողութեն այ՝ այսպիսի բնական գեղեցկութե հաստատուն և շէն երկրիմը բարելաւութեը պիտանի եղած՝ ներքին հանգստութիւնը և բարեկարգութիւնը կատարել ըլլալու համար՝ արժան տեսնըւած պատճառներուն կատարելը, հարկաւոր է։

Փօրթուկեզի տէրութե կարգադրութիւնը, և հպատակներուս հոն մեկզմեկու վրայ հանդիպած բռնութիւնը և վնասը, այն երկրին հետը տէրութե կանոնով եղած ընդունելի դաշինք և պայմանները նորոգելու և հաստատելու արգելք է եղեր։

Երկար ժամանակներէ 'ի վեր Անկլիզի տէրութե հետ միաբանութե դաշինքով կապւած երկիրիմը վիճակը՝ ինծի հարկաւոր գործ սեպելով, Պրագանչայ կոչւած երկրին տունէն՝ Փօրթուկեզի արքայից ցեղէն սերեալ մեծ զաւկին, Ամերիգայի կողմէն այս անգամ Եւրոպայ դառնալը, և թագաւորութե աթոռ նստելու համար՝ վնասակար կռիւներ հանօղ նիւթերը, եթէ Փօրթուկեզի երկրին խաղաղութեը, և եթէ բովանդակ Եւրոպայի տէրութեց յատուկ գործքերը վտանգի մէջ ձգելու բաներ յառաջ գալուն, թագաւորութեն կողմանէ կատարել արթնութի հարկաւոր է։

Ֆիլէմէնկու և Պելճիգայու երկիրներուն մեկզմեկէ զատւելուն համար, անցել ժողովին ձեզի ծանուցած կարգադրութե օրինակին վերջը հինգ տրութե և Պելճիգայի արքային մէջը՝ Ահնամէմը հաստատւեցաւ։ Այս Ահնամէին ընդունելութե գրերը՝ փոխադրութի ըլլալուն պէս՝ ձեզի ծանուցանելու համար հրաման ըրած եմ։

Ֆիլէմէնկի արքայն այս Ահնամէին ընդունելուն մինչեւ հիմա հաճութիւնը չէ ցոյց տըւած, սակայն հինգ տէրութեց մուրախխասներուն՝ որ ամէնուն վերաբերել օգուտը, և յատկացեալ գործքերը կատարելու մեծ ջանք ունենալով, և անկողմնակալութե եղանակը ընտրելով, անոնց միաբանութեը յառաջ տարած պայմանները՝ այս մօտ ժամանակներս կը յուսամ որ ընդունելու հետեւի։

Աֆրիգայու աշխարհէն սեւ ծառայ բերելը և առուծախ ընելը ասկէց հետեւ խսպառ վերնալու և խափանւելու Ահնամէին օրինակը, որ Ֆրանսայի թագաւորին հետ դաշնադրութի և ստորագրութի ըրեր եմ, ուրախ սրտով ձեզի յայտնի կընեմ։

Եւրոպայի տրութիւններուն կողմանէ թագաւորութեն կողմը մեկզմեկու ետեւէ եկած լուրերը և բարեկամական գրերը, և բարեկամ տէրութիւններուն և իմ մէջս անխախտ եղած համակամութիւնը՝ հաշտութե գործը չավրըւելուն հաստատուն վկայական մի է։

Ո՛վ երեսփոխանք ազգիս, ժողովոյն գլխաւոր անձինքը՝ առաջիկայ տարոյն մէջը՝ պէտք եղած ծախքերուն թահմին տէֆթէրին կարգադրել, և յարմար ժամանակին ձեզի յանձնելու համար՝ հրաման և պատուէր տըւած եմ։ Այն տէֆթէրը՝ չափաւոր կերպով յարմարելու համար՝ ջանք ընելու վրայ եմ. հասարակութե պէտք եղած բաներուն յառաջ տանիլը իմ կողմանէ՝ ձեր խոհեմութեը և հայրենեաց սիրոյն և ջանացողութեը՝ յանձնըւած է։

Ո՛վ գլխաւորք [illegible] և երեսփոխանք ազգիս, Փէրիսթօլ քաղաքին մէջը և ուրիշ քանիմը տեղվանք այս վերջին օրերը պատահած մէկ քանի վշտացուցիչ գործքեր՝ ինծի տրտմութեան պատճառ եղան։

Այսքան անձինքներուն կողոպտվելուն և մեռնելուն, և ապրանքի և ստացուածքի ոչընչանալուն պատճառ եղող յանցաւորները արժանապէս պատժըվելով, օրէնքին և կանոններուն ազդու զօրութիւնը տեղը գըտնալու, և հասարակաց պահպանութեան զօրաւոր պատրաստութիւն սեպվելով, բոլոր երկրիս մէջը ներքին կառավարութիւնը և կարգադրութիւնը ուղղելու և բարեկարգելու վայելուչ պատճառներուն զգուշութիւն և ջանք ընելու համար՝ ձեզի համոզելը և հետեւցընելը, Թագաւորութեանս քովը պիտանի և հարկաւոր սեպված է։

Արտօնութիւն, որ է՝ մէկը մէկալին վրայ առանց իրաւանց իշխանութիւն չըբանեցընելը. այս հիմանը վրայ շինեալ մեր Թագաւորութեան կանոնադրութիւն սրտի մօք կապեալ ըլլալովս, իշխանութեանս տակը եղած ազգին տրտունջները յայտնելու համարձակութիւն ունեցող արտօնութեանը կանոնաւոր գործադրութիւնը ուրօղ բաները Թագաւորութեանս կողմանէ ամենևին ընդունել և հաստատել կարելի չէ։

Սակայն նոյն արտօնութեան յարգը պահելու համար, մէկ կարգաւորեալ տէրութեան օրինացը անյարմար, և կանոնաց դիտաւորութեանը օտար եղած՝ յիշեալ բոլոր ապականիչ գործքերը՝ ինչ պատճառի վրայ հաստատեալ ըլլայ՝ թող ըլլայ, անոնց խափանվիլը և բարձըվիլը՝ Թագաւորութեանս հարկաւոր գործքերէն է։

Ու ամէն գործ և անկարգ շարժումն, որ երկիրներուս ապահովութիւնը և հանդըստութիւնը վտանգի մէջ ձգելու առիթ կըլլայ, անոնք ամէնը խափանելու կամեցողութեանս և հետևութեանս՝ ինծի ձեռնտու և օգնական ըլլալու համար հաւատարիմ հպատակներըս հրավիրած ատենս, դատարկ տեղը աշխատ չըլլալըս գիտեմ։

---

Եւրոպայէ արտաքսուած մարդուն խորհուրդը դաժանութեան ռամկավարութեան է։

—

Սախըզին կղզին եղեալ ինչք և ստացուածքներուն հին տիրոջներուն ետ դարձնելը, Ճերմակ ծովին շրջակայ կղզիները ցրված խիստ շատ մարդկանց վերաբերեալ հարկաւոր գործքերէն է։

Ահա մէկ քանի տարիէն'ի վեր փախած մարդիկներուն իրենց տունը և հայրենիքը ետ դառնալները, և դժբախտներուն և դատաւորներուն կողմանէ՝ ամէն կերպիւ աղէկ ընդունելութիւն և խնամք ըլլալով, և ամենևին յանցանքները չըքննելով, գործքով և ճշմարտութեամբ մոռանալով, անցածը անցաւ վճռոյն տակը դըրվելու կերպով, մեծ շնորհաց և ողորմութեան հանդիպած են. սակայն իրենց կեցութեան պէտքը հոգալու կողմանէ, յետին թշվառութեան և կարօտութեան վիճակի մէջ էին։

Չքաւորութեան վիճակը՝ որ շատ մարդկանց պատահած էր, և այն տեղերուն վարուցանի պակասութիւնը՝ որ Արքունական կողմանէ տրված էր, այս բարեշէն կղզոյն աւերութեան պատճառ ըլլալով, նոյն տեղերոյն իրենց տէրոջներուն ետ տալը՝ նոր'ի նորոյ բնակիչներուն և ռայաներուն պատճառ բարեկենդանութեան ըլլալը յայտնի է։

Ու Յունաց ազգին տուաւել խօսք հասկըցող և բարեվիճակ գըտնըվող՝ Սախըզին փախչօղները, յամի Տեառն 1822, թվին 36 ին մէջը, այս պատահած թշվառութեան վիճակին իրենց ազատութեան յանկարծ հանդիպելնուն պատճառովը՝ զըրկըված ստացուածքներուն մէկ մեծ մասը՝ յայտնի է որ ձեռքերնին պիտի հասնի. և ասկէց 'ի զատ՝ նորէն տէր ըլլալու յիշեալ ստացուածքներէն՝ շուտով շատ օգուտ ստանալու չափ մայր դրամ (նօգուտ սերմայէ՝) ապրանքի տիրոջներուն քովը պատրաստ գտնըվիլը ևս կերևնայ։

Սակայն զի այս յիշեալ անձանց շատին հարըստութիւնը որ վերջը մնաց, մինչև հիմա կայ. և այն կղզոյն բնակիչներուն մէջը իսկըզբանէ անտի մէկ զմեկու օգնական և ձեռնտու ըլլալու հարուստներուն եղբայ

բական ջանքը՝ հաստատուն նշան է որ աղքատաց մեծ օգուտ պիտի ըլլայ։

Տիրած տեղերուն ետ դառնալու պատճառաւ՝ հարկաւորեալ Արքունական վընասը վճարելու կերպով, Սախըզի բնակիչներուն իրենց յօժարութեամբ տալու տակը՝ ՎԵՀ ԹԱԳԱՒՈՐԻՆ ընդունելը և իրենց շնորհելը, ետ դարձըված տեղերուն երկրագործ մշակներուն համար ըլլալու ծախքին՝ յայտնի է որ մեծ օգնութիւն և նպաստ պիտի ըլլայ։

Ստակին պիտկանաւոր գինը՝ այս տեղերուն նայելով Եւրոպայի երկիրները շատ վար ըլլալը, և յիշեալ երկիրները շատ մարդիկ մէկզմէկու վրայ փոքր սահմանի մէջ ժողվըվելով՝ կենաց հարկաւոր պիտոյքները այն նեղ տեղերէն պատրաստելնին և վաստըկելնին յայտնի է։

Եւրոպայի բնակիչները այս տեղերու հողը ցանված հինգհարիւր հազար ղուշի սերմին (թօխումին՝) ուժը և ներգործութիւնը ինչ աստիճան ըլլալը որոշելու բաւական չեն։ Այս տեղերուն հողը եթէ այն երկիրներուն համեմատվի, ատոր արդիւնքը՝ քսանապատիկ աւելի ըլլալը, շատ չէ։

Այս կերպով Սախըզի կղզին՝ որ բնակիչներուն կարճամիտ ըլլալէն քանիմը վըտանգաւոր բաներու պատահեցաւ, և ամենևին խոհեմութիւն չըբանեցունելով և կարելի օգուտը չըհանելով, երկու անգամ ապստամբութեամբ և խռովութեամբ յանցանքին և թշվառութեամբ հանդիպեցան, այժմ նոյն կղզին նորէն կենդանութիւնը ստանալով, և Բարեփառ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ հովանաւորութեամբը՝ կամաց կամաց դարձեալ առաջին գեղեցկութիւնը ստանալու աստիճանը հասաւ։

Եթէ այս կղզին և եթէ Այվալըխ, և եթէ մեծի տէրութեան այն ամէն տեղերը՝ որ անոնց հանդստութեան և բարեկարգութեան պատճառները առատ բարերարութեամբ և գթութեամբ նորէն հաստատեց. այս առաջին և չնաշխարհ փորձը որ յետին ժամանակը պատահեցաւ, թէ այժմու ժամանակիս և թէ ապագային օգտակար և շահաւէտ խրատու օրինակմը եղաւ. բայց այն ՚ի հարկէ եղեալ վերջին խռովութեան յիշատակը, ՎԵՀ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ կամեցեալ և հաճեցեալ ներքին կարգադրութեանը արդիւնքովը, մօտ օրերս կանցնի և բոլորովին կըբարձըվի առանց կարծեաց։

Շրջակայ գաւառները և քաղաքները շատ պահապան զօրքեր կարգելով՝ երկիրներուն բնակիչները ծանր հարկի տակ ձըգել, և միշտ անհաւատարիմ կարծելով՝ անցեալ յանցանքնին չըմոռանալ և պատրաստութեան ձեռնամուխ ըլլալը, գոհութիւն Ա͞յ այժմ բովանդակը վերցըված և բարձըված է։

Եւ այս անգամ Մեծափառ Տէրութեան՝ փախչողներուն կալվածքը և ստացվածքը ետ դարձունելովը, անոնց վրայ ունեցած կատարեալ հաւատարմութիւնը հաստատեց. և այն ստացվածքները առնելովնին՝ երախտագիտութեան պարտաւոր ըլլալը, և ճշմարիտ ծառայութեան և հպատակութեան մէջը անշարժ կենալ և պահպանութիւն ընել, որ իրենց սեպհական օգուտներուն առաջինը ըլլալը ամուր վըկայականով հաստատված է, իրենց յանձնըվեցաւ։

Մեծազօր Տէրութիւն Ալեօսմանեան՝ իր թագաւորութեան մէջը ըրած օգտակար կարգադրութիւնը՝ այս կերպով կամեցաւ ամէնուն յայտնի ընել։ Թէեւ եղանակաւ սկսած խառնակութեանը շատ մարդկանց սրտին մէջը դըպացեալ վէրքերը՝ մէկ մէկ մոռցըվելու, և առաջին վնասներուն փոխարէն՝ կատարեալ ներողութիւն ցոյց տալու, և վնասներու պատճառովը օտար երկիր ակամայ փախչողները՝ իրենց քաշելու և հանգստացընելու բարի ջանացողութիւնը, և անոնք շահելու համար ըրած հրամանը՝ ամենեցուն յայտնի է։

Այն մարդիկները՝ որ իրենց աղէկ ըլլալու կարծիքով՝ ունեցած հանգստութիւնին ձգեցին, և անծանօթ իշխանութեան երկէրմը փախան, արդեօք Մեծազօր Տէրութեան հովանաւորութեանը գտած հանգստութեան և համարձակութիւնին՝ այն տեղերը գտած են մի, թող անգամմը մտմտան։

Եւ ատոնք իրենց հայրենի երկրին մէջը՝ գործքերնին և վաստակնին կարգինը մէջ դրածներուն պէս, մէկ օր յառաջ իրենց հայրենիքը գալու փափագնին՝ յայտնի ցոյց կուտայ, թէ Մեծազօր Տէրութեան բոլոր երկիրներուն մէջը արդարութիւն և իրաւունք և կարգաւորութիւն կայ:

Վեհափառ Ինքնակալութիւն Օսմանեան բնական բարեգութ ըլլալովը, իրենց գլխուն ատին անդին ցրուող հպատակները՝ դարձեալ իրեն հովանաւորութեան տակը բերելու շատ փափագ ունի:

Եւ ողորմած բնութիւնը՝ թէ փախչողներուն ապագայ օգուտը չմոռնածէր, անոնց խաղութիւնը և յանցանքին պատճառովը՝ Թագաւորական կողմանէ եղած ծախքերը վճարելու կերպով՝ յանքունուստ ախլված այդքան կալուածքը և ստացուածքը հրաման կըներ որ ծախուի, և անոնցմէ գոյացեալ բազում դրամները իր գանձարանը դրուի: Եւ ահա այս բարեգթութեան գործքը՝ մեծի Տէրութեան կառավարութեան համար ինքզինքէ անտի եղեալ զբաղարութիւնը կընայ սուտ հանել:

Իսկ արդար և իրաւարար Հզօր ԻՆՔՆԱԿԱԼՆ՝ որ յառաջ հարկաւորեցաւ ակամայ կամօք այս փախչողներուն կալուածքը և ստացուածքը Արքայական կողմանէ տիրելու, անոնց փոշման ըլլալը և զղջմանը իմանալով՝ և իր սեպհական հպատակները ըլլալներուն համար՝ մեծ գթութեան աչքը կընայէր անոնց. և հայրական գթութեամբը՝ որուն կը յուսային փախչողները, ողորմութիւն և շնորհ ժամանակ ժամանակ ընելը՝ ամենեցուն յայտնի է:

Ահա այն բարենշան օրը որ այժմ պատահեցաւ, Ամենողորմած Բարերար ԻՆՔՆԱԿԱԼԻՆ մերոյ աշխարհաշէն յիշատակը՝ յայն ատենն բարձրացաւ և տարածվեցաւ, որ այս բնութեան բարեգութ եղող ԻՆՔՆԱԿԱԼԻՆ և ողորմութիւն գրող նոր մարդկանց մէջը՝ արդեօք որ կողմին փառաւել սրտի ցնծութիւն ըլլալը որոշել և վճռել, խիստ դժվարին է: